Հավելված N1

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի փետրվարի 10-ի թիվ 5 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **«ՇԲՕ-ԲՄԱՊՁԲ-25/5»**

«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար **լիզինգով շտապօգնության մեքենաների** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇԲՕ-ԲՄԱՊՁԲ-25/5» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 06/02/2025թ. ժամը 18:01-ին ստացված հարցադրումները և դրա վերաբերյալ 08/02/2025թ. տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1 - Լիզինգի տրամադրման համար լիզինգատուին անհրաժեշտ է ուսումնասիրել լիզինգառուի ֆինանսական վիճակը: Անհրաժեշտ է ներկայացնել ֆինանսական հաշվետվություն բանկի համար՝ լիզինգի նվազագույն տոկոսադրույքի որոշման նպատակով:

Պարզաբանում N 1 - Լիզինգատուի կողմից ներկայացված համապատասխան պահանջը ստանալու դեպքում Պատվիրատուն պատրաստ է տրամադրել անհրաժեշտ փաստաթղթերը՝ ֆինանսական վերլուծությունների համար:

Հարցադրում N 2 – Տեխնիկական բնութագրում առկա են մի շարք կետեր պայմանով, որ դրանք պետք է համաձայնեցնել պատվիրատուի հետ, ինչը կարող է էականորեն ազդել գնագոյացման վրա /օրինակ շտապօգնության մեքենայի արտաքին տեսք և լրացուցիչ պարագաներին վերաբերվող պայմանների դեպքում/: Խնդրում եմ պարզաբանել, ինչպես պետք է կարգավորվի պատվիրատուի կողմից ներկայացված լրացուցիչ պահանջների դեպքում արդեն իսկ ներկայացված գնային առաջարկի պայմաններում կատարված լրացուցիչ ծախսերը: Հնարավոր է արդյոք գնային փոփոխություն:

Պարզաբանում N 2 – Բոլոր այն կետերը, որոնք պետք է համաձայեցնել Պատվիրատուի հետ, չեն կարող առաջացնել գնի զգալի փոփոխություն, քանի որ դրանք վերաբերվում են դիզայներական, սարքերի կամ այլ պարագաների տեղակայման վայրերի որոշման և նմանատիպ այլ հարցերի, իսկ Պատվիրատուի նվազագույն պահանջները նկարագրված են տեխնիկական բնութագրում: Միևնույն ժամանակ, եթե մասնակիցը ցանկություն ունի մինչ հայտերի բացման ժամկետը համաձայնեցնել որևէ կետ, ապա Պատվիրատուն պատրաստ է քննարկել ներկայացված առաջարկները՝ հայտնելով իր դիրքորոշումը: Ինչ վերաբերվում է գնի փոփոխությանը, ապա այն հնարավոր կլինի իրականացնել բացառապես գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համապատասխան:

Հարցադրում N 3 – Տեխնիկական բնութագրում բացակայում է պացիենտի սրահի օդափոխության համակարգի առկայության պայմանը:

Պարզաբանում N 3 - Տեխնիակական բնութագրի «Մեքենայի այլ համակարգեր» բաժնում առկա է օդափոխության պահանջ:

Հարցադրում N 4 – Խնդրում ենք հստակեցնել շտապ օգնության մեքենայի երաշխիքային սպասարկման պայմանները, այն է ով է վճարում սպասարկման ընթացքում նյութածախսի համար (օրինակ՝ յուղի, ֆիլտրերի փոխարինում և այլն): Բացի այդ անհնար է իրականացնել երաշխիքային սպասարկման աշխատանքներ 24 ժամվա ընթացքում, ինչպիսիք են շարժիչի, փոխանցման տուփի և այլնի վերանորոգումը կամ փոխարինումը: Անհրաժեշտ է սահմանել երաշխիքային սպասարկման ավելի իրատեսական պայմաններ՝ հաշվի առնելով ընթացքում օգտագործվող հնարավոր նյութածախսը:

Պարզաբանում N 4 - Համաձայն հրավերի՝ երաշխիքային սպասարկման ենթակա են մեքենայի բոլոր սարքերը, սարքավորումները և դետալները՝ բացառությամբ մարտկոցի և անվադողերի: Համապատասխանաբար, բացառությամբ մարտկոցի և անվադողերի՝ մեքենայի բոլոր սարքերը, սարքավորումները և դետալները ենթակա են սպասարկման կնքվելիք պայմանագրի շրջանակներում՝ առանց որևէ հավելյալ վճարների և պայմանագրերի:
Պատվիրատուն իրատեսական է համարում երաշխիքային սպասարկման աշխատանքները 24 ժամվա ընթացքում իրականացնելը:

Հարցադրում N 5 – Տեխնիկական բնութագրի N 2 Ինֆուզիոն պոմպի պայմանով մեքենայում նախատեսված չեն 2 հատ ինֆուզիոն լուծույթների IV stand:

Պարզաբանում N 5 - Տվյալ դեպքում հրավերի բովանդակության շրջանակներում պարզաբանման ենթակա հարց առկա չէ, ուստի պարզաբանում չի տրամադրվում:

Հարցադրում N 6 – Էլեկտրական և թթվածնային համակարգում բացակայում է պահանջվող վարդակների և թթվածնի կետերի քանակի մասին տեղեկատվությունը:

Պարզաբանում N 6 - Տվյալ դեպքում հրավերի բովանդակության շրջանակներում պարզաբանման ենթակա հարց առկա չէ, ուստի պարզաբանում չի տրամադրվում:

Հարցադրում N 7 – Շտապ օգնության մեքենայում չի կարող կիրառվել տեխնիկական բնութագրով սահմանված N 2 ինֆուզիոն պոմպը, այլ պետք է լինի ինֆուզիոն ներարկիչ պոմպի առկայության պայման:

Պարզաբանում N 7 - Տվյալ դեպքում հրավերի բովանդակության շրջանակներում պարզաբանման ենթակա հարց առկա չէ, ուստի պարզաբանում չի տրամադրվում:

Հարցադրում N 8 – Անհրաժեշտ է հստակեցնել տեխնիկական բնութագրի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված ընդհանուր նշանակության բժշկական և վիրակապական պայուսակի չափերը և նյութը: Նշված է միայն ինչ պետք է պարունակի: Պայուսակի չափերը և նախընտրելի նյութը անհրաժեշտ են, քանի որ պետք է լրացուցիչ տեղ դեղորայքի և բուժգործիքների համար:

Պարզաբանում N 8 - Պայուսակների չափերը և նյութը պետք է ապահովի դրա պարունակության պատշաճ տեղավորումը, պահպանումը և տեղափոխությունը:

Հարցադրում N 9 – Անհրաժեշտ է հստակեցնել տեխնիկական բնութագրի 6-րդ կետով սահմանված շտապօգնության մեքենայի համար նախատեսված անվասայլակի չափերը և պահանջվող բեռնման քաշը: Նշված չեն անվասայլակի լայնությունը, երկարությունը և բարձրությունը: Սա շատ կարևոր պարամետր է, քանի որ անվասայլակը պետք է տեղավորվի շտապ օգնության մեքենայում, ինչպես նաև անցի վերելակների և տարածքների դռների միջոց: Պակաս կարևոր պարամետր չի նաև անվասայլակի բեռնման քաշը, օրինակ 200 կգ բեռնման քաշի դեպքում դատարկ անվասայլակի քաշը բավականին ծանր կլիներ և անհարմար ամենօրյա աշխատանքի համար:

Պարզաբանում N 9 - Բոլոր անհրաժեշտ և էական պահանջները սահմանված են տեխնիկական բնութագրում:

Հարցադրում N 10 – Տեխնիկական բնութագրի 7-րդ կետով պլաստմասե իմոբիլիզացիոն բեկակալների հավաքածուի պահանջում նշված է ստորին վերջույթի և վերին վերջույթի բեկակալների քանակը յուրաքանչյուրից 1 հատ, անհրաժեշտ է շտկել, քանի որ կարող են լինել միաժամանակ երկու վերջույթների վնասվածքի դեպքեր, բացի այդ հավաքածուն իր մեջ ներառում է յուրաքանչուրից 2 հատ:

Պարզաբանում N 10 - Տվյալ դեպքում հրավերի բովանդակության շրջանակներում պարզաբանման ենթակա հարց առկա չէ, ուստի պարզաբանում չի տրամադրվում:

Հարցադրում N 11 – Խնդրում ենք պարզաբանել տեխնիկական բնութագրի 8-րդ կետի՝ ԷՍԳ սարքի պայմաններում ներառված Հավելյալ արտածումների գրանցում ըստ Նէբի (ոo Հэбу) պահանջը:

Պարզաբանում N 11 - Նէբի (ոo Հэбу) մեթոդով հետազոտությունը թույլ է տալիս բացահայտել սրտամկանի թաքնված պաթոլոգիկ փոփոխությունները, որոնք չեն երևում ստանդարտ ԷՍԳ հետազոտության ժամանակ:

Հարցադրում N 12 – Տեխնիկական բնութագրի 11-րդ կետով պահանջվող թթվածնային բալոն ռեդուկտորով, 5լ., որպես այդպիսինն ենթակա չէ օգտագործման, այն անհրաժեշտ է փոխարինել AMBU հավաքածուով, որը ներառում է շնչական դիմակ և բալոնը պացիենտին միացնելու հավաքածու՝ ռեդուկտրով: Ինչպես նաև բացակայում է ռեդուկտրի մասին տեղեկատվություն:

Պարզաբանում N 12 - Տվյալ դեպքում հրավերի բովանդակության շրջանակներում պարզաբանման ենթակա հարց առկա չէ, ուստի պարզաբանում չի տրամադրվում:

Հարցադրում N 13 – Տեխնիկական բնութագրի 13-րդ կետով շտապօգնության մեքենայի համար նախատեսված հիվանդի պատգարակի համար սահմանված բեռնման քաշը արդեն իսկ բավականին մեծ է, ինչը նույնիսկ դատարկ պատգարակի ամենօրյա աշխատանքը դարձնում է անհարմար, բացի այդ ոչ բոլոր տեղերում կա վերջինիս համապատասխան ենթակառուցված: Ինչպես նաև պատգարակի չափերը պետք է լինի փոփոխվող, քանի որ շտապ օգնության տարբեր մեքենաների բարձրությունը և բեռնման չափերը տարբեր են: Անհրաժեշտ է նաև հստակեցնել պետք են արդյոք պատգարակի համար ներքնակ և IV stand:

Պարզաբանում N 13 - Տվյալ դեպքում հրավերի բովանդակության շրջանակներում պարզաբանման ենթակա հարց առկա չէ, ուստի պարզաբանում չի տրամադրվում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇԲՕ-ԲՄԱՊՁԲ-25/5» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Կարինե Սարգսյանին:

Հեռախոս՝ /010/ 510-302

Էլեկտրանային փոստ՝ **karine.sargsyan@1-03yerevan.am**